Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2024
«Արագածոտնի մարզի Ապարանի համայնքում ամբուլատոր կլինիկաների վերանորոգման ծրագրի» ավարտական արարողություն

Երևան՝ 13 մարտի, 2026թ.

Մարտի 13-ին Արագածի առողջության կենտրոնում (ծրագրի իրականացման վայր) տեղի ունեցավ «Արագածոտնի մարզի Ապարանի համայնքի ամբուլատոր կլինիկաների վերանորոգման ծրագրի» ավարտական արարողությունը (մինչև 87,182 ԱՄՆ դոլար): Արարողությանը մասնակում էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Յուտակա Առկին, Ապարանի համանքապետի տեղակալ պարոն Հրայր Մկրտչանը, Արագածի առողջության կենտրոնի տնօրեն դոկտոր Գեղամ Գրիգորյանը, ինչպես նաև բժշկական անձնակազմ և տարածաշրջանի բնակիչներ:

Ծրագրի շրջանակներում վերանորոգվել են տարածաշրջանի երեք ամբուլատոր կլինիկաներ (Արագածի, Քուչակի և Շենավանի առողջության կենտրոնները), տեղադրվել են ջեռուցման, ջրամատակարարման և կոյուղու, ինչպես նաև արևային էներգիայի արտադրության համակարգեր, ինչը հնարավորություն կտա 13,000 բնակիչների տարեկան ստանալ համապատասխան բժշկական ծառայություններ հիգիենիկ միջավայրում: Բոլոր թիրախային կլինիկաները գտնվում էին անբարենպաստ պայմաններում՝ շահագործվելով ավելի քան 50 տարի: Եղանակային տեղումներով պայմանավորված, այս կենտրոնները ստիպված էին դադարեցնել գործունեությունը անձրևոտ և առատ ձյան օրերին՝ տանիքի արտահոսքի և խոնավության պատճառով: Բացի այդ, անբավարար ջեռուցման համակարգերի պատճառով ձմռանը ներսում ջերմաստիճանը իջնում էր մինչև -20°C, ինչը լուրջ ֆիզիկական ծանրաբեռնվածություն էր ստեղծում ինչպես հիվանդների, այնպես էլ բժշկական անձնակազմի համար: Ավելին, քանի որ կենտրոններում ջրամատակարարման և կոյուղու համակարգեր չկային, բժիշկների համար անհնար էր լվացվել, կամ աղտահանել բժշկական գործիքները մաքուր ջրով, ինչը դժվարացնում էր հիգիենիկ կլինիկական միջավայրի պահպանումը:

Համայնքապետի տեղակալ պարոն Մկրտչանը շնորհակալություն հայտնեց՝ ասելով. «Ճապոնիան տարիներ շարունակ աջակցություն է ցուցաբերել Հայաստանում առողջապահության ոլորտին, և մենք խորապես երախտապարտ ենք տարածաշրջանում առողջապահական ծառայությունների բարելավմանն ուղղված աջակցության համար: Գնահատելով Ճապոնիայի ժողովրդին, որպես համայնք՝ մենք կշարունակենք աջակցել բարձրորակ բժշկական ծառայությունների մատուցմանը»: Դեսպան Առկին նույնպես ելույթ ունեցավ՝ ասելով. «Առողջապահական ենթակառուցվածքների զարգացումը հիմք է, որը կարևորում է մարդկային անվտանգությունը և սոցիալական բարեկեցությունը: Մենք հույս ունենք, որ վերանորոգված կլինիկաները կնպաստեն տեղի բնակիչների առողջությանը առաջիկա տարիների ընթացքում և կդառնան Ճապոնիայի և Հայաստանի միջև գործընկերության և համագործակցության խորհրդանիշ»:

Ճահագրգիռ կողմերի հետ լուսանկար

Դեսպան Առկին շրջայց իրականացրեց վերանորոգված կենտրոնում

Վերանորոգված կենտրոնի սենյակներից մեկը

Ծրագրի պաշտոնական ցուցանակը